ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆՈՐՈՐՅԱ ՓՈՒԼԸ
(մաս առաջին)

Նունե Սարուման
ԱրՊՀ

Բանալի բառեր: *գոյապայքար, պատվիրակություն, նստաշրջան, որոշում, հանրահավաք, հանրագիր, արցախահայություն, խտրական քաղաքակա-նություն, հակամարտություն, անկախություն:*

1988 թվականի փետրվարն արձանագրվեց մեր ժողովրդի պատմության մեջ իր նախադեպը չունեցող համաժողովրդական շարժման ծավալմամբ, որով սկզբնավորվեց արցախյան հիմնախնդրի նորօրյա փուլը:

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը արցախահայության նորանկախ պետականության զարգացման արդի փուլի առաջնահերթ հիմնախնդիրներից է, որը մեր ազգի կենսական շահերի տեսանկյունից՝ ունի հույժ կարևորություն:

Երկու տասնամյակից ավելի ժամանակաշրջանի հեռավորությունից, թվում է, թե հայերս պետք է տիրապատեինք հիմնախնդրի բոլոր նրբություններին, նրա առանցքային հարցերի վերաբերյալ ունենայինք ճշգրտված ու խմբագրված, հղկված ու ստուգաբանված բանաձևեր: Սակայն, ստիպված ենք փաստել, որ նախընթաց տարիներին, ձևավորվել ու միջազգային շրջանակներում արմատավորվել է խնդրի ձևախեղված, անհայանպաստ մի կերպար, որը բացառում է հակամարտության արդար կարգավորումը:

Արցախյան հակամարտության ծավալման նորօրյա փուլի հիմքում ընկած էր Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների խորհուրդի 1988 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանը,որտեղ որոշվեց.

1.Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների խորհուրդը 1988 թվականի փետրվարի 20-ի իր արտահերթ նստաշրջանում, ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին ու Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խորն ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանի ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ի Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը: Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը 1988 թվականի հունիսի 13-ին, ինչպես

նաև Ադրբեջանական ԽՍՀ 11-րդ գումարման Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 17-ի 7-րդ նստաշրջանը, քննարկելով նշված հարցը, այն անընդունելի գտավ: Այս հարցի վերաբերյալ Ադրբեջանական ԽՍՀ պետական իշխանության բարձրագույն մարմինների որոշումների մանրազնին ու հանգամանալի ուսումնասիրումը հանգեցնում է այն միանշանակ հետևությանը, որ ինչպես Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, այնպես էլ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճիշտ չեն հասկանում ԼՂԻՄ ժողովրդական դեպուտատների խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի որոշման իմաստն ու բովանդակությունը: Այդ որոշման անընդունելիության մասին նրանց պատասխանը ավելի շատ հիշեցնում է թռուցիկ հուսադրություն, քան խորհրդային սոցիալիստական հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինների իրավական ակտ: Քանի որ հակառակ դեպքում ազգերի ազատ ինքնորոշման լենինյան սկզբունքի իրականացմանն ուղղված ակտի ճանաչումը ոչ մի կերպ չի համատեղվում խորհրդային սոցիալիստական հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինների կոչման հետ:

2.Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների խորհուրդը իր անհամաձայնությունն է հայտնում «Մարզը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից հայկական ԽՍՀ-ին տալու վերաբերյալ ԼՂԻՄ ժողովրդական դեպուտատների խորհրդի միջնորդության մասին» Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թվականի հունիսի 17-ի 7-րդ նստաշրջանի որոշումներին և, հաշվի առնելով ստեղծված լարված իրադրությունը, արտահայտելով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության կամքը, ելնելով մեր միասնական միութենական բազմազգ պետության ազգային-պետական կառուցվածքի հիմքում ընկած ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին լենինյան սկզբունքի հետևողական իրականացման անհրաժեշտությունից, անհրաժեշտ է համարում մեկ անգամ ևս անմիջականորեն դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ խնդրելով ամենայն ուշադրությամբ քննարկել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 15-ի նստաշրջանի որոշումը, որը համաձայնություն տվեց ԼՂԻՄ-ն ընդունել Հայկական ԽՍՀ կազմի մեջ և «Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին տալու մաին» ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը և դրականորեն լուծել հարցը:

Մարզում ստեղծված արտակարգ իրադրությունը կայունացնելու և աշխատանքային նորմալ ռիթմը վերադարձնելու նպատակով խնդրել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը մինչև Լեռնային Ղարաբաղի հարցի վերջնական ու դրական լուծումը ժամանակավորապես, որպես արդի փուլում

միակ ընդունելի տարբերակ, ամենակարճ ժամկետում ինքնավար մարզը հանել Ադրբեջանի ԽՍՀ-ի կազմից և հանձնել ԽՍՀՄ կառավարության տնօրինությանը։

3.ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհուրդը միջնորդում է ԽՍՀՄ Գերագույն դատարանի առաջ, հաշվի առնելով Ադրբեջանական ԽՍՀ Սումգայիթ քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների քաղաքական-իրավական սկզբունքային գնահատականի անհրաժեշտությունը, այդ քաղաքում կատարված մասսայական պետական հանցագործությունների՝ բանդիտիզմի և մասսայական անկարգությունների էության չարամիտ խեղաթյուրումը և դրանք որպես խուլիգանական նկատառումներով կատարված սպանություններ ներկայացնելու Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն դատարանի փորձը, ինչպես նաև այն հանգամանքը, որ սոցիալիզմի սկզբունքների հետ անհամատեղելի սումգայիթցի ջարդարարների չարագործությունները արդեն հսկայական վնաս են հասցրել Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդների քաղաքական, բարոյական կյանքին, նրանց ավանդական բարիդրացիական հարաբերություններին, ղեկավարվելով ԽՍՀՄ Գերագույն դատարանի մասին ԽՍՀՄ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, իր դատավարության տակ վերցնել այդ քրեական հանցանքների գործերը որպես առաջին ինստանցիայի դատարան հանգամանորեն և օբյեկտիվորեն քննարկել դրանք, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության անունից կայացնել խիստ, բայց արդարացի դատավճիռ։

4. Հավանություն տալ 19-րդ համամիութենական կուսակցական կոնֆերանսի հասցեով ներկա նստաշրջանի մասնակիցների դիմումի տեքստին։

5.ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհուրդը մարզի աշխատավորներին կոչ է անում ամենուրեք՝ ձեռնարկություններում, կազմակերպություններում, կոլտնտեսություններում և սովխոզներում վերականգնել նորմալ աշխատանքային ռիթմը, մոբիլիզացնել բոլոր ջանքերը հանուն ժողովրդական տնտեսության ճյուղերում գոյացած բացթողումների վերացման, աշխատանքային նորմալացված ռիթմով դիմավորել 19-րդ կուսկոնֆերանսը»[1]։

Այսպիսով, արցախցիները համարձակորեն համապատասխան որոշումներ ընդունելով փորձեցին տնօրինել սեփական ճակատագիրը։ Սակայն դա հանդիպեց ինչպես Ադրբեջանի Հանրապետության, այնպես էլ կենտրոնական իշխանության խիստ դիմադրությանը։ Կենտրոնը անպատրաստ էր ընդունել հարցի կարևորությունը։

Հուլիսի 12-ին ԼՂԻՄ ժողպատգամավորների մարզխորհրդի նոր նստաշրջանը կրկին հաստատեց ԼՂԻՄ-ը Մայր Հայաստանին վերամիավորելու անհրաժեշտությունը, նշելով այն որպես մարզում և նրա շուրջ պահպանվող

[1] «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 24 հունիսի։

լարված իրավիճակից դուրս գալու միակ ընդունելի տարբերակ: Միաժամանակ առաջարկվեց ԼՂԻՄ-ը վերանվանել Արցախի հայկական ինքնավար մարզ[1]: «Ինչպես արդարացիորեն նշված է ԽՄԿԿ 19-րդ համամիութենական կոնֆերանսի բանաձևում, խորհուրդների բազմազգ պետության ձևավորման նախնական փուլին հատուկ դինամիզմը էապես թուլացավ և խարխլվեց ազգային քաղաքականության լենինյան սկզբունքներից նահանջելու, անձի պաշտամունքի շրջանում օրինականության խախտումների, լճացման գաղափարախոսության և հոգեբանության հետևանքով: Ազգային հարցի լուծման գործում ձեռք բերված նվաճումների բացարձակ բնույթ էր տրվում, պատկերացումներ էին ստեղծվում ազգային հարաբերությունների անհիմնախնդրության մասին: Բավականաչափ հաշվի էին առնվում ինչպես առանձին հանրապետությունների և ինքնավար կազմավորումների, այնպես էլ ազգային խմբերի սոցիալ-տնտեսական, կուլտուրական զարգացման բուն ընթացքով առաջ քաշված ոչ քիչ սուր հարցերը յուրժամանակյա լուծում չէին ստանում: Դա հասցնում էր հասարակական անբավարարվածության, որը երբեմն կոնֆլիկտային(վիճահարույց) բնույթ էր ստանում:

Այս ոլորտում հասունացած խնդիրների շարքում հատուկ տեղ է գրավում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, որը ծագել է 1921 թվականի հուլիսի 5-ին, ապա սրվել և խորացվել է հետագա տասնամյակների ընթացքում: …Գոյատևման նպատակով հայերը հարկադրված թողնում էին իրենց նախնիների օջախը և ապաստան փնտրում Խորհրդային Միության տարբեր տարածաշրջաններում:

Այս ամենը շարունակվեց, չնայած մարզի վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկ. Մ.Ս.Գորբաչովի դիմումին և ԽՄԿԿ Կենտկոմի ու Մինիստրների խորհրդի ընդունած որոշմանը»[2]:

Մարզում տիրող իրավիճակը ներկայացնելուց հետո ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ 20-րդ գումարման խորհրդի 8-րդ նստաշրջանը նշում է, որ Ղարաբաղյան հիմնախնդիրը կարելի է լուծել միայն «Ադրբեջանի ԽՍՀ-ի կազմից դուրս գալու և Հայկական ԽՍՀ-ին միանալու միջոցով»[3]:

Ուստի ժողպատգամավորների ԼՂԻՄ խորհուրդը ելնելով իրավիճակից որոշում է.«1.Հաշվի առնելով ստեղծված վիճակը, անհրաժեշտ համարել մեկ անգամ ևս ընդգծել հետևյալը. Արտահայտելով Լեռնային Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնության պետական կամքը և ելնելով մեր միասնական միութենական բազմազգ պետության ազգային պետական կառուցվածքի հիմքում ընկած ազատ ինքնորոշման ազգերի իրավունքի մասին լենինյան սկզբունքը հետևողականորեն իրականացնելու անհրաժեշտությունից,

[1] Նույն տեղում, 1988, 13 հուլիսի:
[2] «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 13 հուլիսի:
[3] Նույն տեղում,1988, 24 հունիսի:

հռչակել Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դուրս գալը:

2.Հաշվի առնելով, որ վերջին ժամանակներս ինքնավար մարզում իրադարձությունը ծայրաստիճան սրվել էր, իսկ հանրապետական մարմինների գրված դիրքը ավելի է ապակայունացնում իրավիճակը, ուշադրություն դարձնելով այն բանին, որ Ադրբեջանական ԽՍՀ-ի հետ կապերը գործնականում խզված են, ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ խորհուրդը մարզի համար միակ ընդունելին համարում է Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 15-ի նստաշրջանի որոշման իրագործումը:

3.Ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ խորհուրդը հույս է հայտնում, որ Լեռնային Ղարաբաղի միացումը Հայկական ԽՍՀ-ին ըմբռնումով կընկալվի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության աշխատավորների և ժողովուրդների կողմից:

4.Հանձնարարել ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի գործկոմին սահմանված կարգով միջնորդություն հարուցել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Արցախի Հայկական Ինքնավար Մարզի վերանվանելու մասին»[1]:

Սակայն ղարաբաղյան հիմնախնդրի քաղաքական լուծումը շարունակվում էր ձգձգվել, մարզը կանգնեցնելով անկանխատեսելի հետևանքների առջև: Ստեղծված լարված իրադրության պայմաններում Լեռնային Ղարաբաղի մասին հարցը քննարկվեց ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունում, և առաջադրվեց հաշվի առնել ԽՍՀՄ Սահմանադրության 78-րդ հոդվածը ու տարածքային փոփոխություններ չկատարել:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության որոշման մեջ նշվեց տարածքային փոփոխության անհնարինության մասին իբր թե խուսափելով ազգամիջյան բախումներից, չկասկածելով կամ չցանկանալով ընդունել նաև հակառակ վերաբերմունքը՝ հարցի արդարացի լուծման բացառումը նույնպես կհանգեցներ ազգամիջյան բախումների: Միաժամանակ առաջադրվեց հարցի խոր ուսումնասիրման ու նոր առաջարկություններ մտցնելու համար ստեղծել Ազգային խորհրդի հանձնաժողով: Սակայն այդ հանձնաժողովը, որ խնդիր ուներ ուսումնասիրել տարածաշրջանում ստեղծված իրավիճակը և նպաստել լարվածության հետագա թուլացմանը, ավելի խորացրեց լարվածությունը: Կենտրոնական հեռուստատեսությունը, ռադիոն, մամուլը, լրատվության մյուս միջոցները շարունակում էին խեղաթյուրել ղարաբաղյան շարժման էությունն ու բնույթը, թաքցնել Սումգայիթում և այլուր իրագործված բարբարոսությունները, կտրականապես հրաժարվում էին քաղաքական գնահատական տալ այդ

[1] «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 13 հուլիսի:

իրադարձություններին, փորձում մասնատել ընդհանուր, նախօրոք կազմակերպված հանցագործությունները և դատավարություններն անցկացնել երկրի տարբեր քաղաքներում:

1988թ. հուլիսից մինչև 1989թ. դեկտեմբերը Լեռնային Ղարաբաղում այդ հարցի վերաբերյալ նոր առաջարկություններ մտցնելու կապակցությամբ եղան 4 հանձնաժողովներ, որոնց մոտ համապատասխան կարծիք մշակվեց Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջը տիրող իրադարձությունները ուսումնասիրելուց հետո:

1988 թվականին բարձրացրած ղարաբաղյան հիմնահարցը հակամարտության վերածվեց այն պահին, երբ Ադրբեջանն ուժ կիրառեց:

1988 թվականի հունիսի 21-ին տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պատգամավորների մարզխորհրդի նոր նստաշրջան, որը կրկին անգամ դիմեց ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին խնդրելով մեծ ուշադրությամբ քննարկելու ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի որոշումը, որն իր համաձայնությունն է տվել Ղարաբաղը միացնել Հայաստանին: Կոնկրետ փաստերով հիմնավորվեցին մարզը Հայաստանին վերամիավորելու արցախցիների պահանջի արդարացիությունը, դատապարտվեց Սումգայիթը և հարց դրվեց Սումգայիթում կատարված հանցագործությունները քննել ԽՍՀՄ Գերագույն դատարանում[1]:

1988 թվականի աշնանից ղարաբաղյան շարժումը դուրս եկավ իր շրջանակներից և դարձավ ակտիվ քաղաքական գործոն: Այն ավելի մեծ թափ ստացավ 1988 թվականի նոյեմբերին և դեկտեմբերի սկզբին: Ադրբեջանից տեղահան արվեցին հարյուր հազարավոր հայեր: Կենտրոնական իշխանությունները ռազմական դրություն մտցրին Բաքվում և Երևանում: Ճգնաժամի այդ ամենալարված ժամանակ Հայաստանում 1988 թվականի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ աշխարհացունց երկրաշարժ: Մ. Ս. Գորբաչովի աղետի գոտի ժամանելուց և մեկնելուց անմիջապես հատո Արցախում ձերբակալվեցին ղարաբաղյան շարժման ակտիվիստ Ա. Մանուչարովը, իսկ Երևանում՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները…[2]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թվականի հունվարի 12-ի հրամանագրով ԼՂԻՄ-ում մտցվեց կառավարման հատուկ ձև. սկսվեց արցախյան գոյամարտի նոր փուլ: Դադարեցվեցին մարզի ժողովրդական պատգամավորների և նրա գործադիր կոմիտեի լիազորությունները մինչև խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացումը, ինչպես նաև կուսակցության մարզային կոմիտեի գործողությունները: Որոշման մեջ ասված է, որ կոմիտեն օժտված է ինքնավար մարզի ժողովրդական դեպուտատների խորհրդի լիազորություններով: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Հատուկ կառավարման կոմիտեն չկարողացավ կայունացնել վիճակը…

[1] «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 23 հունիսի:
[2] Նույն տեղում, էջ 75-76:

Տարածաշրջանում վիճակը կարգավորելու համար ԼՂԻՄ ուղարկվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նոր հանձնաժողով, որի եզրակացությունն արդեն թելադրված էր կենտրոնից… Կենտրոնում չէին ուզում հասկանալ, որ Ղարաբաղի բնակչության ազատ ինքնորոշման իրավունքի մերժումը, նրան բռնությամբ Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում պահելը նշանակում է ԽՍՀՄ սահմանադրության և միջազգային պարտավորությունների կոպիտ խախտում [1]:

ԼՂԻՄ եկած ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի հանձնաժողովի անդամ, ակադեմիկոս Եմելյանովը նշել է. «Դրությունը շատ ծանր է, երբեք չէր կարելի մտածել, որ գործը կարող էր այդքան հեռու գնալ: Այժմ այստեղ երկու թշնամի կողմեր են: Դիրքորոշումը ծայրահեղորեն է արտահայտվում. մեկը՝ ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու, մյուսը՝ ընդհակառակը՝ տերիտորիան չբաժանելու կողմնակից: Ես գտնում եմ, որ այդ հարաբերությունների սրման պատճառը գտնվում է ոչ միայն հանրապետությունում, այլ նաև կենտրոնում: Այն բացատրվում է մեր կենտրոնական օրգանների անշրջադարձությամբ, անշարժունությամբ, այդ հիմնախնդրի նկատմամբ նրանց մոտեցման ոսկրացածությամբ: Ասում են, մինչև որ կայծակ չլինի, մուժիկը (գյուղացին) չի խաչակնքի: Այստեղ արդեն վաղուց կայծակ եղավ, ուստի կոորդինալ միջոցներ դեռ վաղուց էր հարկավոր ձեռնարկել: Գտնում եմ, որ մինիմում արդեն մեկ տարի ուշացել ենք» [2]:

Գերագույն քաղաքական մարմնի անվճռականությունից օգտվեցին Ադրբեջանի հակաժողովրդական շրջանները: 1989թ. սեպտեմբերին Արցախում հայտնվեցին մեսխեթցի թուրքերը: Մարզում մեսխեթցիների հայտնվելը տեղի ունեցավ Հատուկ կառավարման կոմիտեի գործունեության ընթացքում, որն անմիջապես ենթարկվում էր ԽՍՀՄ վարչական և պետական կառավարման գերագույն օրգաններին[3]: Կուսակցության մարզկոմի և քաղխորհրդի կազմացրումը հասցրին մարզի ինքնուրույնության թուլացմանը, որից օգտվեցին Ադրբեջանի ղեկավարները, սկսեցին խառնվել մարզի գործերին, հաճախ շրջանցելով Հատուկ կառավարման Կոմիտեն:

Սումգայիթում տեղի ունեցած ցեղասպանության ակտին հաջորդեցին հայերի ջարդերն ու սպանությունները Շուշիում, Բաքվում, Կիրովաբադում և Ադրբեջանական ԽՍՀ մյուս քաղաքներում ու շրջաններում, որոնք ուղեկցվում էին բռնատեղահանություններով: Միաժամանակ Լեռնային Ղարաբաղը ենթարկվում էր ինչպես ներքին ճնշման, այնպես էլ արտաքին կազմակերպված շրջափակման:

---

[1] Բարսեղով Յու. , Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է, Երևան, 1990, էջ 74-75:
[2] Аргументы и факты, 5-11 августа 1989г.,N 31.
[3] «Известия», 15 января 1989г..

Այդպիսի ծանր պայմաններում էր, որ Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի նախագահությունը դիմում հղեց ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդին Ղարաբաղի 80 տոկոսը կազմող հայ բնակչության ապահովմանը օժանդակելու խնդրանքով: «ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ի դեկլարացիայի 2-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր մարդ ունի ազատությունների իրավունքներ, յուրաքանչյուր մարդ և նրա ընտանիքի բոլոր անդամները չեն կարող ենթարկվել ոչ մի խտրականության, յուրաքանչյուր մարդ ունի իր երկրի տարածքում ազատորեն տեղաշարժվելու իրավունք: ՄԱԿ-ի դեկլարացիան միշտ էլ խախտվել է Ղարաբաղում, իսկ այսօր արդեն խոսք է գնում հայ բնակչության հանդեպ ֆիզիկական հաշվեհարդարի ռեալ սպառնալիքի մասին: Հնչում են սումգայիթյան ցեղասպանությունը կրկնելու կոչեր, որոնք պաշտպանություն են գտնում Ադրբեջանական հանրապետության պաշտոնական շրջանների կողմից: Երկար ամիսներ փոքրիկ, հարյուրհիսուն հազարանոց քրիստոնեական մարզը գտնվում է ամենադաժան պաշարման պայմաններում, կանոնավոր կերպով կատարվում են սպանություններ, բռնություններ, իրականացվում էր արմատական բնակչության դեպորտացիա (բռնագաղթ):

Չնայած ամենաբարձր ինստանցիաներով հղված բազմաթիվ դիմումներին, մեր երկրի ղեկավարությունը տարածաշրջանի բնակչության անվտանգությունը երաշխավորող վճռական միջոցներ չի ձեռնարկում:

Այսօր դիմում ենք Ձեզ համառ պահանջով՝ ամեն ինչ անել Ղարաբաղի հայ բնակչության անվտանգության ապահովման համար, անհրաժեշտության դեպքում՝ ընդհուպ մինչև ՄԱԿ-ի զորքերի կոնտինգենտ մտցնելը: Վաղը կարող է ուշ լինել»[1] :

1989թ. նոյեմբերի 20-ին ՏԱՍՍ-ը տարածեց «ԽՍՀՄ արտգործ-նախարարությունում» հաղորդագրությունը, որտեղ կտրուկ ձևով քննադատվում է ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձաժողովի կողմից Լեռնային Ղարաբաղի հարցի առնչությամբ ընդունված բանաձևը: Համանման հայտարարությամբ հանդես է եկել նաև ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի միջազգային հարցերի կոմիտեն: Այդ կապակցությամբ ԼՂԻՄ Ազգային խորհրդի անդամները, լիազորված մարզի հայ բնակչության անունից հայտարարելու, «որ ամբողջ հայ ժողովուրդը և ԼՂԻՄ-ի հայ բնակչությունը, մասնավորապես, գոհունակությամբ են ընկալել ԱՄՆ-ի սենատի հանձնաժողովի որոշումը»[2], դրանով իսկ հերքելով ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Բեսմերտնիխի հայտարարությունը՝ «սենատական հանձնաժողովի այդպիսի որոշումը հարուցել է խորհրդային քաղաքացիների սուր հակազդեցությունը և չի կարելի

[1] «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1989, 4 սեպտեմբերի:
[2] «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1989, 22 նոյեմբերի:

չհասկանալ այդ վրդովմունքը»[1]: Խոսք չեղավ այն մասին, թե ո՞վ էր լիազորել Ա. Բեսմերտնիխին բոլոր խորհրդային քաղաքացիների անունից «վրդովմունք» հայտնելու:

Լեռնային Ղարաբաղի բնակչությունը, ի դեմս իր ներկայացուցչական այնպիսի մարմինների, ինչպիսին է, ամենից առաջ, ԼՂԻՄ-ի Ազգային խորհուրդը, ինքն է բազմիցս բարոյական և քաղաքական աջակցության համար դիմել դեմոկրատական պետություններին, այդ թվում և Միացյալ Նահանգներին, միջազգային հասարակայնությանը, Միավորված ազգերի կազմակերպությանը: Ուստի հայ ժողովուրդը բոլորովին էլ սենատի հանձնաժողովի բանաձևը չի համարում «կոպիտ և ինքնակոչ միջամտություն», ինչպես որ ասված է ՏԱՍՍ-ի հաղորդագրության մեջ:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին՝ որպես ինքնորոշման նկատմամբ նրա ժողովրդի ձգտմանը սթափորեն նայելու խորհրդային ղեկավարության չկամություն, հիմնախնդիրը Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճեր հանգեցնելու փորձեր, մարզի չդադարող շրջափակում և ադրբեջանական ազգայնամոլների զինված հարձակումներ, «ԼՂԻՄ իրադրության կարգավորման առնչությամբ» ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի առաջարկությունների լրիվ ձախողում. այս ամենը բնավ չի վկայում դեպի կարգավորում տանող ինչ-որ միտումի մասին: Մանավանդ, որ հիմնախնդիրը ոչ թե «կարգավորման» կարիք ունի, այլ ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա վերջնական լուծման կարիք, սկզբունք, որը ամրապնդված է միջազգային փաստաթղթերում, որի տակ դրված են նաև խորհրդային ներկայացուցիչների ստորագրությունները: Ուստի 1989թ. նոյեմբերի 21-ին ԼՂԻՄ Ազգային Խորհրդի նախագահությունը ելնելով ստեղծված իրավիճակից ճիշտ գնահատեց ԱՄՆ-ի սենատի որոշումը և այդ կապակցությամբ հայտարարեց. «ԼՂԻՄ-ի հայ բնակչության՝ սուվերեն հայ ժողովրդի լիիրավ հատվածի անունից ԼՂԻՄ Ազգային խորհրդը ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի անդամներին երախտագիտություն է հայտնում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազգային ազատագրական շարժումն ըմբռնելու և նրան աջակցելու համար: Միաժամանակ, Ազգային խորհուրդը ՏԱՍՍ-ի Գերագույն Խորհրդի միջազգային հարցերի կոմիտեի հաղորդագրությունները դիտում է որպես «սառը պատերազմի ոգով» տոգորված հաղորդագրություններ, որպես ստալինյան-բրեժնևյան ժամանակների ռեցիդիվ, որը հակասում է խորհրդային ղեկավարության կողմից հռչակված «նոր քաղաքական մտածողությանը»[2]:

1989թ. նոյեմբերի 21-ի ՏԱՍՍ-ի հաղորդագրությանը հաջորդում է նոյեմբերի 28-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը «Լեռնային Ղարաբաղի ինքնավար

[1] Նույն տեղում:

[2] «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1989, 22 նոյեմբերի:

մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին»[1], ըստ որի նախատեսվում է Լեռնային Ղարաբաղը փաստորեն բռնությամբ կրկին վերադարձնել Ադրբեջանական ԽՍՀ իշխանության տակ՝ հակառակ նրա հայ ազգաբնակչության հստակ, արտահայտված կամքի, որը բազմիցս հաստատված և պատշաճ ձևով վավերագրված է նրա ներկայացուցչական մարմինների որոշումներում:

ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի որոշումն ընդունվել էր՝ շրջանցելով դեմոկրատական պառլամենտական ընթացակարգը: Տեղում իրադրությունը պարզելու և ԼՂԻՄ-ի հիմնախնդրի լուծման վերաբերյալ համապատասխան հանձնարարականներ ներկայացնելու համար ստեղծված՝ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի հանձնաժողովին թույլ չի տրվել իր եզրահանգումների մասին զեկուցել ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի նստաշրջանում: Լեռնային Ղարաբաղի և Հայկական ԽՍՀ-ի հայ ազգաբնակչությունը ներկայացնող ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների կարծիքը ամբողջովին և ցուցադրաբար անտեսվել է: Որոշումն ընդունվել էր հապշտապ, առանց քննարկման, ԼՂԻՄ-ից և Հայկական ԽՍՀ-ից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների բացակայությամբ, որոնք ի նշան բողոքի լքել են նիստերի դահլիճը:

Ընդունված որոշումը նահանջ էր առանց այն էլ սահմանափակ այն միջոցառումներից, որոնց կատարումը ներկայացվում էր որպես իրավական հիմունքների վրա Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի քաղաքական լուծման անհրաժեշտ պայման: Հատուկ կառավարման կոմիտեի գործունեությունը ամրապնդելու փոխարեն, այն փոխարինվում է մի մարմնով, որը կարող է միայն ժամանակավորապես իրականացնել վերահսկիչ-վերադիտող ֆունկցիաներ այն պայմաններում, երբ նախատեսվում է իրական իշխանությունը նորից վերադարձնել Ադրբեջանական ԽՍՀ-ին:

Ի պատասխան ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի նոյեմբերի 28-ի որոշման Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը 1989թ. դեկտեմբերի 1-ին ընդունեցին որոշում[2], որը ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի նոյեմբերի 28-ի որոշումը որակավորեց որպես բռնակցման նոր ակտ: «Հիմնվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արձագանքելով հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտմանը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը որոշում են.

---

[1] «Խորհրդային Ղարաբաղ», 29 նոյեմբերի 1989թ.: Տես նաև՝Թովմասյան Վ. Հ., Աղաջանյան Վ. Ա., Ներսիսյան Յու. Բ., Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991, էջ 121:

[2] «Խորհրդային Հայաստան», Երևան¸1989, 3 դեկտեմբերի¸ «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ¸ 1989¸ 5 դեկտեմբերի:

1. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ինքնորոշման փաստը հաստատված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի և հուլիսի 12-ի նստաշրջանի, ինչպես նաև մարզի բնակչության լիազոր-ներկայացուցիչների 1989 թվականի օգոստոսի 16-ի համագումարի և Ազգային խորհրդի հոկտեմբերի 19-ի նիստի որոշումներում:

2. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումարը և նրա ընտրած Ազգային խորհուրդը որպես միակ օրինական իշխանություն:

3. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը հռչակում են Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը:

4. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը ստեղծում են համատեղ հանձնաժողով (իր աշխատանքային ապարատով) Հայկական ԽՍՀ-ի Լեռնային Ղարաբաղի վերամիավորումն իրագործելու ուղղությամբ գործնական քայլեր մշակելու համար:

5. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը պարտավորվում են ներկայացնել Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության ազգային շահերը:

6. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդի նախագահությունը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին և ԼՂԻՄ Ազգային խորհրդի նախագահությանը հանձնարարվում է գործադրել սույն որոշումից բխող բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ իրականացնելու համար Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական և մշակութային կառուցվածքների իրական միաձուլումը միասնական պետական-քաղաքական համակարգում»[1]:

Փաստորեն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ բռնության անջատված հայ ժողովրդի մի մասի՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի ժխտումը ամբողջ «հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի անտեսումն է և կոպտորեն ոտնահարում է խորհրդային ֆեդերացիայում ԽՍՀՄ ժողովուրդների կամավոր միավորման սկզբունքը, ուղղակիորեն հակասում է ԽՍՀՄ սահմանադրության հիմնարար սկզբունքին և խախտում է ԽՍՀՄ միջազգային պարտավորությունները, այդ թվում ՄԱԿ-ի կանոնադրության, Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդակցության մասնակից պետությունների ներկայացուցիչների Վիեննայի հանդիպման եզրափակիչ ակտի և ամփոփիչ փաստագծով, որոնք պետություններին պարտավորեցնում են իրենց օրենքները, կանոններն ու քաղաքականությունը համապատասխանեցնել միջազգային իրավունքի վերաբերյալ նրանց

[1] «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1989, 3 դեկտեմբերի:

պարտավորություններին, ներառյալ իրավասության և իրենց ճակատագիրը տնօրինելու, ներքին ու արտաքին քաղաքական ստատուսը ըստ իրենց հայեցողության որոշելու ժողովրդի իրավունքի սկզբունքը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը՝ որպես ինքնորոշման սկզբունքին, ԽՍՀՄ կազմի մեջ հայ ժողովորդի մուտք գործելու պայմաններին, ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀՄ սահմանադրությանը, ինչպես նաև ԽՍՀՄ-ի և խորհրդային ֆեդերացիայի սուբյեկտների միջազգային պարտավորությունների հակասող որոշում, հայտարարվում է անվավեր Հայկական ԽՍՀ-ին և Լեռնային Ղարաբաղի համար և ոչ մի իրավական հետևանքներ չստեղծող:

Հայկական ԽՍՀ-ն և ԼՂԻՄ-ը ներկայացնող ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների նիստերի դահլիճից հեռանալու պահից ընդունված ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի բոլոր որոշումները, հայ ժողովրդի իրավունքներին ու շահերին դրանց չհամապատասխանելու դեպքում, համարել չգործող»[1]:

Միաժամանակ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը հայ ժողովրդի և բռնությամբ անջատված նրա մի մասի՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի խախտման դեմ բողոքով դիմեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդին, բոլոր միութենական հանրապետությունների գերագույն խորհուրդներին, ՄԱԿ-ի անդամ պետությունների պառլամենտներին, ներառյալ Եվրոպայում անվտանգության ու համագործակցության վերաբերյալ խորհրդակցության մասնակից պետություններին և Եվրոպական պառլամենտներին, Հայկական ԽՍՀ արտաքին գործերի նախարարությանը, արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական ընկերությանը, սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեին, Արմենպրեսին՝ արտասահմանյան բոլոր հայ համայնքներին տեղյակ պահելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընդունած որոշման, սույն որոշման մասին, էլ ավելի համախմբելով մայր հայրենիքի շուրջը՝ ի պաշտպանություն հայ ժողովրդի ոտնահարված իրավունքի:

Վերոհիշյալ որոշման ընդունման հետ միասին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը ընդունեցին մի նոր որոշում՝ «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին»[2]: «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի ինքնորոշման փաստը հաստատված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի հուլիսի 12-ի նստաշրջանների, ինչպես նաև մարզի բնակչության լիազոր-ներկայացուցիչների 1989 թվականի օգոստոսի 16-ի համագումարի և ազգային խորհրդի հոկտեմբերի 19-ի նիստի որոշումները:

[1] Նույն տեղում, 5 դեկտեմբերի:
[2] «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1989, 5 դեկտեմբերի:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը հռչակում են Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը: Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա տարածվում են Հայկական ԽՍՀ-ի քաղաքացիական իրավունքները»[1]:

Ընդունելով այսպիսի որոշում, Հայկական ԽՍՀ և ԼՂԻՄ-ի բարձարագույն մարմինները պատրանքներ չէին տածում, թե այն ոգևորությամբ կընդունվի միութենական ատյաններում ու Ադրբեջանում: Դրա վառ ապացույցն այն է, որ 1989թ. դեկտեմբերի 6-ին Բաքվում կազմվեց Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը ստանձնող հատուկ մարմին՝ կազմկոմիտե Ադրբեջանի ԿԿ երկրորդ քարտուղար Պոլյանիչկոյի գլխավորությամբ: Պրովոկացիոն գործողությունների նոր ալիք սկսվեց Ադրբեջանի ժողովրդական ճակատի և նրա ազդեցության տակ ընկած ներքին զորքերի ստորաբաժանումների պարետության կողմից: «1990թ. հունվարի 2-ին Ստեփանակերտ քաղաքում ողբերգական դեպք տեղի ունեցավ: Զինվորական կարգախմբի կողմից կրակ է բացվել բնակչության վրա, որի հետևանքով երկու հոգի զոհվել են, երեքը՝ ծանր վիրավորվել»[2]: Այս դեպքի կապակցությամբ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ Զ. Հ. Բալայանը, Վ. Մ. Գաբրիելյանը, Վ. Ս. Գրիգորյանը, Բ. Վ. Դաղամյանը և Հ. Ա. Պողոսյանը դիմեցին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Ս. Գորբաչովին ի գիտություն հաղորդելով, «որ տարածաշրջանի իրադարձությունը սպառնում է դուրս գալ վերահսկողությունից:

Մենք վճռականորեն պահանջում ենք ստեղծել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորական հանձնաժողով և Ստեփանակերտ ուղարկել իրադարձությունը տեղում գնահատելու համար»[3]:

Փաստորեն պարզորոշ է, որ ղարաբաղյան հարցի լուծման համար պայքարի նոր փուլ է սկսվում, գոյամարտի նոր շրջան:

1990-ական թվականների վերջերից սկսած մեր հոգու խոռվքի նախասկզբից հրապարակվել են երկրի բարձր ատյանի ոչ քիչ որոշումներ, օրենքներ, դեկլարացիաներ ու պլատֆորմներ, որոնցից յուրաքանչյուրն ահավոր ճգնաժամից դուրս գալու հույս է ներշնչել ամենքիս: Երեխայի պես ուրախացել ենք այն պատգամավորների ելույթներով, որոնք առաջադրում էին խորհրդային ֆեդերացիայի հիմնովին վերակառուցման անհրաժեշտության խնդիրը: Սկսած 1988 թվականի փետրվարից ամեն երեկո ուշի-ուշով հետևել ենք «Ժամանակ» տեղեկատվական ծրագրին, սպասելով Արցախի իրավիճակի մասին որևէ օբյեկտիվ կարծիքի, հուսադրվել ենք արտասահմանյան լրագրողների

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, 1990, 4 հունվարի:

[3] «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1989, 4 դեկտեմբերի:

պահանջներով, կարծելով, թե կարող է դա Արևմուտքի կառավարությունների ազդեցիկ անհատների վրա որևէ ազդեցություն ունենալ և նպաստել գործընթացի առաջխաղացմանը, մոռանալով հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման վերջին հարյուրամյակի պատմությունը, որ մեծ տերություններից և ոչ մեկին, ինչպիսի հավատ և ինչպիսի հասարական կարգ էլ նա ունենա, չեն հուզել ոչ հայկական կոտորածները, ոչ կողոպուտները, և ոչ էլ Հայաստան աշխարհի տարածքային թրատումները: Բոլոր մեծ տիրությունները հայկական բզկտված հարցը, որի բաղկացուցիչ մասը Արցախի հիմնախնդիրն է, օգտագործել են միայն իբրև դիվանագիտական խաղ՝ իրենց նվաճողական շահերի համար:

Արցախի հիմնահարցի լուծման համար նոր հնարավորություններ բացվեցին 1991 թվականի սեպտեմբերի 2-5-ը տեղի ունեցած ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ՝ հինգերորդ համագումարից հետո, երբ արդեն այդ համագումարը ըստ էության լուծարել էր ԽՍՀՄ-ը: Իսկ արդեն 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց հանրաքվե, և հայ ժողովուրդը միակամ վճռեց իր ապագան. անկախ ժողովրդական Հայաստանի օգտին քվեարկեց քվեարկության իրավունք ունցող քաղաքացիների 94,39 տոկոսը: Հայ ժողովուրդը կարողացավ միջազգային համակեցության նորմերի սահմաններում իր կամքը՝ անկախ ու ժողովրդավարական պետություն ստեղծելու մասին հայտնել աշխարհին: Սեպտեմբերի 23-ին Հայստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման մասին» որոշումը, ըստ որի Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց Հայաստանի Հանրապետության Անկախ Պետություն: Հայ ժողովուրդը մի անգամ էլ աշխարհին ցույց տվեց իր անհողդողդ կամքը, իր արիությունն ու վճռականությունը:

Մինչ այդ, օգոստոսի 29-ին, տեղի ունեցած Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանը ընդունեց «1918-1920թթ. պետական անկախության վերականգնման» մասին որոշում: Ի պատասխան դրան, սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցած ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը՝ բոլոր մակարդակների պատգամավորների մասնակցությամբ, ընդունեց որոշում «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և դրան կից Շահումյանի շրջանի շրջաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ) հռչակելու»[1] մասին, որը (ԼՂՀ)-ն օգտվում է ԽՍՀՄ սահմանադրությամբ և օրենսդրությամբ հանրապետություններին տրված լիազորություններից և իրեն իրավունք է վերապահում ինքնուրույնաբար որոշելու իր պետական-իրավական

[1] «Հայաստանի Հանրապետություն», Երևան¸ 1991¸3 սեպտեմբերի:

կարգավիճակը՝ երկրի և հանրապետությունների ղեկավարության հետ քաղաքական կոնսուլտացիաների և բանակցությունների հիման վրա: ԼՂՀ տարածքում մինչև ԼՂՀ սահմանադրության և օրենքների ընդունումը պիտի գործեր ԽՍՀՄ սահմանադրությունն ու օրենսդրությունը, ինչպես նաև՝ գործող մյուս օրենքները, որոնք չեն հակասում սույն հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին: Իսկ դեկտեմբերի 10-ին Արցախում անցկացված հանրաքվեն անկախ ճանաչեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

(Շարունակելի)

Ամփոփում

Հոդվածում ներկայացվում է 1988 թ. ԼՂԻՄ ժողպատգամավորների խորհրդի արտահերթ նստաշրջանի որոշումը,որով արցախյան շարժման նորօրյա փուլի իրավական հիմքը դրվեց: Փորձ է արվում ցույց տալ,որ արցախահայությունը օրինական ճանապարհով ձեռնամուխ եղավ պաշտպանելու իր ազգային ինքնուրույնությունն ու անկախությունը: Սակայն ի պատասխան դրան Ադրբեջանն ուժ կիրառեց, ինչն հանգեցրեց ռազմական գործողությունների:

Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, ողբերգական իրադարձություններ, արցախահայությունը 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակեց Լեռնային Ղարաբաղի անկախ Հանրապետությունը:

Новая фаза процесса урегулирования арцахского противостояния

Н. Сарумян,
к.и.н., доцент АрГУ

Резюме

Ключевые слова: борьба за существование, представительство, сессия, всенародное собрание, решение, противостояние, дискриминационная политика, независимость, присоединение,армяне Арцаха.

В статье представлено решение внеочередной сессии народных депутатов НКАО 20-го февраля 1988 года, которым новому этапу арцахского движения было придано правовое основание. Делается попытка показать, что население Арцаха встало на защиту своего национального суверенитета и независимости. Однако, в ответ армяне Арцаха столкнулись с военным противостояниям со стороны Азербайджана, что привело к кровопролитным военным действиям.

Преодолев многочисленные трудности, трагические события, армяне Арцаха 2-ого сентября 1991 года провозгласили независимость Нагорно-Карабахской Республики.

A New Phase of the Process of Settlement of Artsakh Confrontation

N.Sarumyan,
p.s.n.,docent ASU

Summary

***Key words**: the struggle for existence, delegation,session, national awakening, assembly, decision, the opposition, discrimination policy, independence, unification, Artsakh Armenians.*

The article presents the decision of the extraordinary session of People's Deputies of the Nagorno Karabakh Autonomous Region on February 20, 1988, which established the legal basis for the Karabakh movement.The article attempts to reflect that Artsakh Armenians stood up to defend their national identity and independence.

However, the Azerbaijan responded to the peaceful rallies of Artsakh Armenians by brute force, which resulted in military clashes. Overcoming adversities and tragedies, Artsakh Armenians declared as Nagorno Karabagh Republic on September 2, 1991.